**Հայ-ռուսական համալսարանում գործող**
**ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի**
**Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդին**
*(հասցե՝* 0051, *Հայաստանի Հանրապետություն,*
*ք. Երևան,* Հովսեփ Էմինի փող., 123*)*

# Կ Ա Ր Ծ Ի Ք Ը

**Պաշտոնական ընդդիմախոս,**
**իրավաբանական գիտությունների դոկտոր,**
**պրոֆեսոր Աշոտ Խաչատրյանի**

**Միքայել Գագիկի Մելքումյանի՝ «Վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման արդի հիմնահարցերը» վերտառությամբ՝ վերտառությամբ՝ ԺԲ.00.02 - Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ**

**Միքայել Մելքումյանի** ատենախոսության թեման ակնհայտ արդիական է: Դա պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ, մի կողմից, վարչարարությամբ պատճառված վնասի հատուցումն որպես վարչական իրավունքի տեսության և իրավակիառ պրակտիկայի հիմնախնդիր ունի համակարգային հետազոտության անհրաժեշտություն, այնուհետև՝ այդպիսի վնասի հատուցման սահմանադրական իրավունքի հարգումն ու պաշտպանությունը դիտարկվում է որպես հանրային իշխանության առանցքային պարտականություն, իսկ մյուս կողմից, այդ ինստիտուտի վերաբերյալ տեսական հետազոտություններն ու դրանց լուծումները առանցքային և միաժամանակ գործառնական նշանակություն ունեն մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների արդյունավետ ապահովման ու պաշտպանության երաշխավորման տեսանկյունից:

Միաժամանակ, տարիների ընթացքում՝ հետազոտության առարկա ոլորտում ձևավորված իրավական չափորոշիչները որոշակի արդիականացման կամ փոփոխությունների անրաժեշտություն են ենթադրում, ինչը պայմանավորված է սահմանադրական նոր կարգավորումների և վարչական հարաբերությունները կարգավորող օրենսդրական համակարգերի արդիականացման կարևորությամբ:

Բացի այդ, վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման բովանդակային հատկանիշների և իրավական հայեցակարգերի տեսական-իրավական վերլուծությունը, Հայաստանի Հանրապետությունում դրանց կիրառելիության սահմանների սահմանումն ու առանձնահատկությունների բացահայտումը, ինչպես նաև այդ ինստիտուտի կիրառման իրավական հետևանքների գնահատումը հրատապ են ոչ միայն իրավակիրառ պրակտիկայի երաշխավորման առումով, այլև՝ օրինաստեղծ գործունեության լավարկման անհրաժեշտության տեսանկյունից:

Սահմանադրական և վարչաիրավական հարաբերություններում վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման՝ որպես մարդու և քաղաքացու խախտված իրավունքի պաշտպանության միջոցի կիրառման իրավաչափության կամ արժեբանական նշանակության բացահայտմանն ուղղված յուրաքանչյուր գիտական հետազոտություն անկասկած համակարգային նշանակություն ունի հատկապես սահմանադրական այդ ինստիտուտի վերաբերյալ տեսական և միասնական մոտեցումների ձևավորման համատեքստում:

Այս առումով խրախուսելի է հեղինակի կողմից նման աշխատանք ներկայացնելը, որի հիմքում առաջադրված են հետազոտական կարևոր նշանակություն ունեցող այնպիսի խնդիրներ, ինչպիսին են՝ պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավական հիմքերի հստակեցումը, այդ վնասի հատուցման պայմանների սահմանումն ու բովանդակային հատկանիշների և իրավական հայեցակարգերի ժամանակակից վիճակի, ինչպես նաև վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման և դրա կիրառման իրավական հետևանքների գնահատմանն առնչվող և այլ հիմնահարցերի հետազոտումը:

Համակարծիք լինելով հեղինակի այն պնդման հետ, որ վարչական մարմինների գործողություններով կամ անգործությամբ պատճառված վնասի հատուցման իրավունքի իրացումը երաշխավորող լիարժեք օրենսդրական կարգավորումների անհրաժեշտությունը դարձել է հրատապ խնդիր՝ հաշվի առնելով այդ բնագավառում ծագող վեճերի ավելացման միտումները, ինչպես նաև այն, որ, այդ ծանրաբեռնվածությամբ պայմանավորված, վարչական մարմինների կողմից իրենց վերապահված լիազորությունների իրականացումն ինքնին կարող է միջամտել անձի որոշակի իրավունքներին՝ անձի համար առաջացնելով որոշակի անբարենպաստ հետևանքներ (էջ 4), անհրաժեշտ է կարևորել, որ գրախոսման ներկայացված աշխատանքն ինքնին արդիական է հենց վարչական մարմինների գործունեության արդյունքում մարդու և քաղաքացու խախտված իրավունքների վերականգնման իրավակարգի ամրապնդմանն ուղղված միջոցների հետագա կատարելագործման ու իրավական կարգավորումների հիմնախնդիրների լուծման տեսանկյունից:

Հեղինակը գիտական բարեխղճությամբ ու անհրաժեշտ հետազոտական խորությամբ անդրադարձ կատարելով վարչարարությամբ պատճառված

վնասի հատուցման իրավաչափության հիմնահարցին՝ համակարգային վերլուծություն է կատարել այդ ինստիտուտի շուրջ ձևավորված և մասնագիտական գրականության մեջ շրջանառվող մոտեցումներն ու տեսակետները:

Ընդհանուր առմամբ հեղինակն ուսումնասիրել է համարժեք մասնագիտական գրականություն և վերլուծել թեմային առնչվող գիտագործնական նյութ: Միաժամանակ, աշխատանքի հեղինակը դրսևորել է թեմային առնչվող տեսական աղբյուրների համարժեք իրազեկվածություն, ինչպես նաև դրանցից օգտվելու և պատշաճ վերլուծություններ կատարելու անհրաժեշտ ունակություն:

Ատենախոսության կառուցվածքը հնարավորություն է տվել ընտրված հարցադրումների առնչությամբ նյութի շարադրանքը դարձնելու առավել տրամաբանական ու ամբողջական, մասնավորապես առանձին հիմնահարցերի համակողմանի ուսումնասիրությունը նպաստել է մասնավոր ու կոնկրետ խնդիրների ամբողջական հետազոտությանը:

Հեղինակի կողմից, որպես ատենախոսության հիմնադրույթներին առնչվող հրատարակված գիտական հոդվածները համարժեքորեն են արտացոլում պաշտպանության ներկայացվող եզրահանգումները:

Ատենախոսության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակը դրսևորել է ինքնուրույն հետազոտություն կատարելու և դրանց արդյունքում հնարավորինս ինքնատիպ ու որոշակի հիմնավորումներով ուղեկցվող դատողություններ անելու անհրաժեշտ ունակություն:

Ատենախոսությունը, որոշ բացառություններով հանդերձ, շարադրված է հստակ ու միաժամանակ պատշաճ գիտական լեզվաոճով, հեղինակը կարողացել է ապահովել նյութի շարադրանքի ներքին տրամաբանությունը:

Պաշտպանության ներկայացված հիմնադրույթները, կարծում եմ, համապատասխանում են ներկայացվող պահանջներին:

Ընդհանուր առմամբ աշխատանքն առանձնանում է բարվոք լեզվաոճով, դրանում հեղինակն իր իրավական մտածելակերպի առանձնահատուկ ու ինքնատիպ ոճով կարողացել է ապահովել ինչպես նյութի շարադրանքի որակը, այնպես էլ աշխատանքի հստակությունը՝ պայմանավորված սեփական դատողությունների հիման վրա ներկայացված մեթոդաբանական ու տեսական-իրավական անհրաժեշտ փաստարկներով ու հիմնավորումներով:

**Միաժամանակ, անհրաժեշտ է նկատել, որ աշխատանքը զերծ չէ որոշ թերություններից, որոնց առնչությամբ ստորև ներկայացնում եմ հետևյալ նկատառումները.**

1. Ընդհանուր բնույթի նկատառումների շրջանակում կցանկանայի նշել, որ ատենախոսության կառուցվածքում ցանկալի կլիներ թեմայի և աշխատանքի 1-ին գլխի տրամաբանության շրջանակում **ոչ իրավաչափ** վնասի հատուցման հարաբերակցության շրջանակում հետազոտության առարկա դիտարկվեին նաև **իրավաչափ** վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հիմնախնդիրները, որոնց տեսական-իրավական վերլուծության արդյունքում համապարփակ կներկայացվեին վարչարարությամբ պատճառված վնասի

հատուցման ժամանակակից տեսական-իրավական մոտեցումներն ու ընկալումները:

2. Հետազոտության թեմայի մշակվածության շրջանակում ցանկալի կլիներ նաև ատենախոսության թեմայի տրամաբանությանը համապատասխան անդրադարձ կատարվեր հետազոտության առարկային առնչվող գիտագործնական նշանակություն ունեցող այնպիսի աշխատանքներին, ինչպիսիք են՝ 2016 թվականին Պարգև Սարոյանի կողմից պաշտպանված և ՀՀ ԲՈԿ-ի կողմից հաստատված՝ **«Վարչարարությամբ պատճառված վնասի հատուցումը»** վերտառությամբ, ինչպես նաև 2021 թվականին Արման Գրիգորյանի կողմից պաշտպանված և ՀՀ ԲՈԿ-ի կողմից հաստատված՝ **«Վնասի հատուցման սահմանադրական իրավունքը (համեմատական իրավական վերլուծություն և Եվրոպական իրավական չափորոշիչները)»** թեմայով թեկնածուական ատենախոսությունները, որոնք բովանդակային առումով նվիրված են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, ինչպես նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման սահմանադրական իրավունքի իրականացմանն առնչվող հիմնախնդիրների համալիր և համակարգային հետազոտությանը:

3. Հեղինակը՝ որպես պաշտպանության ենթակա գիտական նորույթ (կետ 3) ներկայացրել է հետևյալը, որ անհրաժեշտ է **«(...)օրենսդրորեն հատուցման առավելագույն սահմանաչափ ամրագրելուց զերծ մնալ»**: Այս դրույթի հիմքում ատենախոսի իկողմից դրվել է այն մոտեցումը, ըստ որի՝ «հատուցման ենթակա գումարի առավելագույն չափի սահմանափակումը կարող է խաթարել անձի խախտված իրավունքների ողջ ծավալով վերականգնման հնարավորությունը, քանի որ վնասի չափի որոշման հարցում կարող են ազդեցություն ունենալ մի շարք գործոններ, որոնց հաշվառմամբ արդարացի հատուցումը կարող է գերազանցել գործող օրենքով սահմանված առավելագույն չափը» (էջ 8-9):

Անհրաժեշտ է նշել, որ պաշտպանության ներկայացված դրույթը պետք է պայմանավորված լինի արդեն իսկ կատարված հետազոտության արդյունքների ու գիտականության տարր բովանդակող հիմնական դրույթների ձևակերպմամբ: Իսկ ներկայացված շարադրանքն ինքնին ենթադրում է հեղինակի ընդամենը ցանկություն կամ առաջարկություն:

Սակայն, անհրաժեշտ է նկատել, որ անձի իրավունքների վերականգնման համատեքստում անդրադառնալով վնասի հատուցման հիմնահարցերին, հեղինակն աշխատանքի 2-րդ գլխի 2.2-րդ ենթագլխում (էջ 63-80) և 2.3-րդ ենթագլխում (էջ 80-96) ոչ նյութական վնասի հատուցման առանձնահատկությունների և անձի կյանքին ու առողջությանը պատճառված վնասի հատուցման համակարգերի համեմատական վերլուծության համատեքստում վկայակոչել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկան և Սահմանադրական դատարանի 2017 թվականի նոյեմբերի 7-ի ՍԴՈ-1383 որոշմամբ արտահայտված իրավական

դիրքորոշումները, որոնց տրամաբանությունից հետևում է, որ հատուցման առավելագույն սահմանաչափ սահմանելն ինքնին չի խրախուսվում, քանի որ դրանով անձի խախտված իրավունքների ողջ ծավալով վերականգնման հնարավորությունն ավելի է նեղացվում:

Ասվածի համատեքստում պաշտպանության ներկայացված դրույթը հեղինակի կողմից լրացուցիչ հստակեցման կարիք ունի:

*4.* Աշխատանքի 3-րդ գլխի 3.1-րդ ենթագլխում հետազոտության առարկա հիմնախնդիրների ուսումնասիրության, ինչպես նաև տվյալ ոլորտը կարգավորող իրավական ակտերի վերլուծության ու համադրման արդյունքում (էջ 98-109) հեղինակը կատարել է հետևյալ եզրահանգումը, որ՝ *«(...) վարչական մարմիններն իրավունք ունեն վնաս պատճառել քաղաքացիների և իրավաբանական անձանց օրինական շահերին միայն օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով նախատեսված լիազորությունների իրականացման շրջանակներում: Վարչական մարմինների այդ լիազորությունները վերապահվում են, ի թիվս այլնի, նաև համամարդկային արժեքների պահպանման համար, որոնք էական նշանակություն ունեն ինչպես ողջ հասարակության, այնպես էլ բնակչության որոշակի խմբերի համար: Այլ կերպ ասած՝ վնասը համարվում է օրինական ճանապարհով պատճառված, եթե օրենքում առկա է թույլատրող նորմ: Հարաբերությունների նեղ շրջանակ են կազմում այն դեպքերը, երբ պետական մարմինների կողմից իրավաչափ է համարվում վնաս պատճառելը: Այսինքն՝ վարչական մարմինների օրինական գործողություններով պատճառված վնասի հատուցումը բացառություն է և ոչ թե ընդհանուր կանոն:» (էջ 107-108):*

Հիշյալ եզրահանգման կապակցությամբ, ինչպես նաև հիշատակված խնդրին առնչվող հանգամանքի հնարավոր առկայությամբ պայմանավորված, անհրաժեշտ է նկատել, որ հանրային իշխանության ակտով վնասը պատճառում է ոչ թե այդ ակտն ընդունած մարմինը կամ պաշտոնատար անձը, այլ՝ պետությունը, քանի որ այս դեպքում պետությունն է ստանձնում պատճառված վնասը հատուցելու պարտականություն, որը հետապնդում է հանրային շահերից ելնելով սահմանադրական իրավակարգի և հասարակության պահպանման նպատակներ:

Այսինքն, սահմանելով վնասի հատուցման համակարգ՝ պետությունը հանդես է գալիս ոչ թե որպես վնաս պատճառող, ինչը կենթադրի պատճառված վնասի ամբողջական փոխհատուցման պահանջի կատարում, ինչպես նաև՝ ոչ թե որպես դելիկտային պարտավորություն կրող պարտապան, այլ որպես հանրային ընդհանուր բնույթի շահեր արտահայտող սուբյեկտ, որը պետական բյուջեի միջոցներն ուղղում է ընդհանուր շահերի ու նման դեպքերի շրջանակում իրականացված ծախսերի փոխհատուցմանը:

Ուստի, կարծում եմ ցանկալի կլիներ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հիմնախնդիրները հետազոտման առարկա դիտարկվեին Սահմանադրության ոչ միայն 6-րդ և 62-րդ հոդվածների, այլև՝ 1-ին հոդվածի, 3-րդ հոդվածի 2-րդ ու 3-րդ մասերի, 47-րդ հոդվածի 7-րդ, 51-

րդ հոդվածի 2-րդ, 58-րդ հոդվածի 2-րդ, 59-րդ հոդվածի 2-րդ մասերի և այլ կարգավորումների համատեքստում:

Ամփոփելով հիշյալ ատենախոսության վերաբերյալ նկատառումները, կարծում եմ, որ դրանք չեն նսեմացնում կատարված աշխատանքի ընդհանուր առմամբ դրական գնահատականը, դրանց մի մասն առնչվում է գիտական բանավեճի շրջանակներին, մյուս մասը՝ հստակեցման կարիք ունեն, թեև աշխատանքը ներկայացվել է նման աշխատանքներին ներկայացվող պահանջների պահպանմամբ:

Միաժամանակ, հարկ է նշել, որ գրախոսման ներկայացված աշխատանքը գիտական և գործնական կարևոր նշանակություն ունեցող ինքնուրույն և ամբողջական հետազոտություն է, որտեղ ակնհայտորեն դրսևորվում է հեղինակի կարողությունը՝ համակարգված և տրամաբանական մոտեցմամբ իրականացնել սահմանադրական և վարչական իրավունքի տեսության բարդ հիմնախնդիրներից մեկի՝ վարչարարությամբ պատճառված վնասի հիմնախնդիրների համակարգային ուսումնասիրություն կատարելու և դրանց արդյունքում հնարավորինս ինքնատիպ ու որոշակի հիմնավորումներով ուղեկցվող դատողություններ անելու անհրաժեշտ ունակություն:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ հեղինակի կողմից արված եզրահանգումները հիմնականում բխում են ատենախոսության ընդհանուր տրամաբանությունից, համապատասխանում առաջադրված նպատակներին ու խնդիրներին:

Ատենախոսությունը շարադրված է հասկանալի ու գիտական ոճով, հեղինակը ապահովել է նյութի շարադրանքի ներքին տրամաբանությունը:

Պաշտպանության ներկայացված հիմնադրույթները համապատասխանում են ներկայացվող պահանջներին՝ ինչպես նորույթի, այնպես էլ հիմնավորվածության չափանիշներով:

Ատենախոսությունում պաշտպանության ներկայացված հիմնադրույթ-ները համարժեքորեն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում:

Սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական դրույթներն ու բովանդակությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ **Միքայել Մելքումյանի**՝ «Վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման արդի հիմնահարցերը» վերտառությամբ՝ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավա-ության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.02 - Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

**Պաշտոնական ընդդիմախոս,**
**իրավաբանական գիտությունների դոկտոր,**
**պրոֆեսոր**

**Ա.Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

**22 հունիսի 2026 թ.**

***Պրոֆեսոր Աշոտ Խաչատրյանի ստորագրությունը***

***Հաստատում եմ՝***

***ՀՀ Սահմանադրական դատարանի***

***աշխատակազմի ղեկավարի տեղակալ***

***Ա. Մարության***

**22 հունիսի 2026 թ.**